

ՀԱՏՈՒԿ ՀՆՉԵՐԱՆԳՈՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇԱՐԱԴԱՍՍԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ԴԱՍՍԱԿԱՆ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Սրանք սովորաբար այն նախադասություններն են, որոնց բնորոշ է առանձնահատուկ՝ հրամայական, հարցական կամ քայքայական հնչերանգ: Այսպիսի նախադասություններում շարադասական բաղադրիչների հաջորդականությունը, ի տարբերություն սովորական պատմողական երանգի նախադասությունների, առավել քան ենթակա է հնչերանգային գործոնի ազդեցությանը, ավելին, հաճախ գերազանցապես պայմանավորված է դրանով և ամբողջովին ենթարկվում է նման նախադասությունների հուզահարողակցական ուղղյալ դերի ու նշանակության իրացմանը: Այսպիսի նախադասությունները իրարից շատ դեպքերում տարբերվում են ոչ միայն իրենց հատուկ հնչերանգի բնույթով, ոչ միայն նախադասության բաղադրիչների խոսքիմասային, եղանակաժամանակային (մասնավորապես ստորոգյալի), կամ որևէ այլ ձևաբանական առանձնահատկությամբ կամ էլ սպառարկու քառերի (ձայնարկություններ, վերաբերականներ, կոչականներ և այլն) նկատելի առատությամբ: Դրանք իրարից հաճախ զանազանվում են նաև իրենց քաղականին ինքնատիպ շարադասական կաղապարավորմամբ: Այս տեսակետից նկատելիորեն առանձնանում են հատկապես հրամայական երանգի նախադասությունները: Պատճառը, կարծում ենք, առաջին հերթին հրամայական նախադասությունների՝ մեծամասամբ կառուցվածքայնորեն քերի (սովորաբար ենթակայի գեղչմամբ) լինելու մեջ է: Մեր կողմից քննության առնված քնագրային օրինակներում այդպիսին էին 310 հրամայական նախադասություններից 264-ը (մոտավորապես 85 %-ը), ինչպես օրինակ՝ *Տոբ գկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ /ԴՓՊՀ, 180/:* *Արի՛ և մի՛ մերժեր զմեզ վասն անուան քոյ /Ազաթ., 111/ և այլն:*

Ի դեպ, այդ սեկտի մեջ զգալի թիվ են կազմում այն կառույցները, որոնցում կա ենթական անվանող կոչական քաղադրիչ: Վերջինիս առկայությունը հրամայական նախադասություններում սովորաբար ի չիք է անում առանց այն էլ ձևական ենթակայի անհրաժեշտությունը, ինչպես օրինակ՝ *Որդեա՛ն, զօրէ՛ն իմ մի՛ մոռանար /Առակք, Գ, 1/:* *Արի՛ եկ, մերձառի՛ իմ, գեղեցի՛ն իմ, աղսոնի՛ իմ /Երգ, Բ, 13/:* Թեև համեմատաբար սակավ դեպքերում հնարավոր է նաև հավելադիր ենթակայի գոգահեռ առկայությունը, ինչպես՝ *Դա, Տէ՛ր, լնի՛ մեր օգնական այսօր /Եղ., 130/:* *Մակայն դա, Տէ՛ր, պահեա՛ զանձինս մեր յանարժան խայրատականցս /Ազաթ., 94/:*

Գրաբարի հրամայական նախադասությունների շարադասական առանձնահատկությունների քննությանն անցնելուց առաջ հարկ ենք համարում նշել, որ գործածում ենք լեզվաբանական գրականության մեջ ընդունված հետևյալ պայմանական նշանները՝ *P* (ստորոգյալ), *S* (ենթակա), *A* (պարագաներ), *O* (խնդիրներ), ինչպես նաև «ձայնարկ.», «վերաբ.», «կոչ.» նշումները՝ համապատասխանաբար անվանելու հրամայական կառույցներում այնքան հաճախակի հանդիպող ձայնարկությունները, վերաբերականներն ու կոչականները: Ընդ որում, ինչպես նախկինում, այնպես էլ հրամայական նախադասությունների շարադասության քննության հետ կապված՝ ելնում ենք այն իրողությունից, որ նախադասության շարադասական կաղապարի բաղադրիչներ պիտի համարվեն ոչ միայն նախադասության անդամները, այլ նաև այն քառերն ու կապակցությունները, որոնք նախադասության արտահայտության պլանում շարահյուսական կապի մեջ չեն նախադասության անդամների հետ:¹ Միանգամայն իրավացի է Վ. Քոսյանը, երբ գրում է. «Շարահյուսական կապի քայքայությունը չի նշանակում, թե այդ քառերն ու կառույցները մտային կապ չունեն նախադասության կազմիչների

¹ Այդ մասին մանրամասն տե՛ս Ս. Հայրապետյան, *Ենթակայի, ստորոգյալի և ուղիղ խնդրի շարադասությունը դասական գրաբարում*, «Հայոց լեզվի պատմության հարցեր», հ.2, եր., 1985, էջ 73-74:

հետ: Առանց այդպիսի կապերի առկայության նրանք չէին գործածվի առհասարակ»:² Ավելին, կարելի է առանց վարանելու նշել, որ յուրաքանչյուր մախադասությանը (ի մասնավորի նաև՝ հրամայական) հաղորդվող մտքի ավարտությունն ապահովման, շարահյուսական ձևավորման տեսակետից արդի քերականագիտության մեջ «մեկուսացած անդամներ»³ համարվող այս միավորները (կոչականներ, ձայնարկություններ և այլն) կարող են որոշակի դեր խաղալ: Ելնելով դրանից՝ վերոհիշյալ միավորները համարում ենք մախադասության շարադասական կադասարի մույնպիսի քաղաղրիչներ, ինչպիսիք են մախադասության «ավանդական» անդամները:

Բնագրային նյութի հանգամանակի քննությունը թույլ է տալիս դասական գրաբարի հրամայական մախադասությունների համար շարադասական լիակադասար դիտել այն կառույցը, որտեղ այս կամ այն գծային հաջորդականությանը միաժամանակեղբն առկա են շարադասական բոլոր հնարավոր քաղաղրիչները՝ ձայնարկություն կամ վերաբերական, կոչական բառ կամ բառակապակցություն, ենթակա, ստորոգյալ, բայական անդամի խնդիր կամ սլաքագա լրացումներ, նաև սրանց լրացումներ: Եվ քանի որ այդ լիակադասարն իր մեջ ամերաժեշտորեն պիտի միաժամանակ ընդգրկի հնարավոր բոլոր շարադասական քաղաղրիչները, նշանակում է, ինչպես նշում է Գ. Ջահուկյանը՝ «կարող է չունենալ ոչ մի նմուշ»⁴ և դրսևորվել միայն իր մասնակի տեսակների մեջ՝ մասնակադասարներով:

Այնուհանդերձ դասական գրաբարի նյութի ուսումնասիրության հիման վրա բանաձևել ենք հրամայական մախադասությունների շարադասական հիմնակադասար՝ քաղաղրիչների փոխդասավորության մի քանի տարբերակներով: Դրանցից մեկը քաղաղրիչների { $S \rightarrow$ («ձայնարկ.» + «կոչ.») $\rightarrow P \rightarrow A \rightarrow (O)$ } հաջորդականությունը ունեցող հիմնակադասարային տարբերակն է, ինչպես օրինակ՝ *Իսկ դու, ո՛վ ուշիմ ընթերցատեր, հայեա՛ց աստամօր ընդ հուսասարութիւն կարգի երից ազգացդ* /ՄԽՊՀ, 17/:

Հիմնակադասարի մեկ այլ տարբերակային դրսևորում է { («ձայնարկ.» + «կոչ.») $\rightarrow P \rightarrow O$ կամ $A \rightarrow S$ }-ը, ինչպես՝ *Ա՛յ խաբերայ և չարագործ, տուեալ լիցի քեզ քազատութիւնն ինն հազար տմի* /Եզն., 94/:

Ակնհայտ իրողություն է այն, որ կոչականի առկայության դեպքում մախադասության ենթական սովորաբար չի արտահայտվում, առավել ևս, երբ խոսքը վերաբերում է հրամայական մախադասություններին, որոնք առանց այդ էլ գերակշռող մեծամասնությամբ ենթակայազուրկ են: Լավագույն դեպքում կոչականին հաքաղվող դերանուն ենթական, իրոք, ձևական է, որովհետև նրա բովանդակությունը հենց այդ կոչականի մեջ է քաքնված:⁵ Մյուս կողմից՝ ակներև է, որ կոչականին առաջադասվող այդպիսի ենթակայի շնորհիվ կոչականով արտահայտված կոնկրետ առարկան, որին ուղղված է խոսքը, ոչ միայն վերածվում է մտքի շեշտն իր վրա կրող հրամայական բայ-ստորոգյալին զուգահեռ տրամաբանորեն մույնքան ընդգծուն երկրորդ քաղաղրիչի, այլև սատկանում է այդ առարկային ուղղված խոսքի ուժը: Այդ իսկ պատճառով մասնատիպ կառույցներն ունենում են հնչերանգային երկու քարձրակետեր, որոնցից մեկի կրողը մախադասության ստորոգյալն է, մյուսինը՝ դերանուն ենթական կոչականի հետ: Այս իրողությունը ակնհայտ դրսևորում ունի վերոհիշյալ քաղաղրիչների սկզբնային դիրք ունեցող հրամայական մախադասություններում, որոնք կարելի է քանաձևել մի քանի շարադասական մասնակադասարներով:

Դրանցից առաջինը { $S \rightarrow$ «կոչ.» $\rightarrow P \rightarrow (O$ կամ $A)$ } մասնակադասարն է, որ, մեր հաշվումներով, բնորոշ է դասական գրաբարի ենթակա ունեցող հրամայական մախադասությունների մի քավականին սովոր մասին: Սկզբնային դիրքում դերանուն ենթական իրեն անմիջապես հաջորդող կոչականի հետ միասին վերջինիս ուժեղ շեշտվածության շնորհիվ մախադասության մնացած մասից տրոհվում է քավականին զգալի արտասանական դադարով, ինչը կարող է մույնիսկ մեղմել կամ նկատելիորեն թուլացնել հրամայական բայով միջադաս ստորոգյալի տրամաբանական ընդգծվածությունը:

² Վ. Զ ո ս յ ա ն, Ժամանակակից հայերենի մախադասության վերլուծության հարցեր, Եր., 1976, էջ 116:

³ Նույնը:

⁴ Գ. Ջ ա հ ո լ կ յ ա ն, Հայոց լիզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 115:

⁵ Խ. Բ ա ղ ի կ յ ա ն, Կոչականը և նրա շառքումը, Եր., 1982, էջ 14:

Այդպես է, օրինակ՝ *Եւ դու, որդի՜ մարդոյ, մարգարեաց ի վերայ լեռանցն Իսրայիլի /Եզեկ., ԼԶ, 1/։ Դու, Տէր մարդասէր և քաղցր, ընկա՛լ և խառնեա՛ն՝ և զին ոգիս ի գունդ քո սուրբ վկայիցն /Ազաթ., 201/։ Այլ դու, որդեա՛կ իմ, զօրացի՜ր շնորհօք /Բ Տիմօթ., Բ, 1/։ Դու, Տէր, լե՜ր մեր օգնական այսօր /Եղ., 130/ և այլն։*

Դրա դեմն առնելու նպատակ ունի մնան կառույցներում ստորոգյալի տեղաշարժը դեպի մախադասության սկիզբ, ինչի շնորհիվ վերականգնվում է ստորոգյալի բարձր հնչերանգը, և այս դեպքում հրամայական մախադասությունը կրկին ունենում է արտասանական երկու, գրեթե հավասարազոր, բարձրակետեր։ Այսպիսի մախադասություններն ունեն $\{ P \rightarrow S \rightarrow \text{«Կոչ.»} \rightarrow (O \text{ կամ } A) \}$ շարադասական մասնակադասաբար *Տես դու, Գրիգորին ... /Ազաթ., 67/։*

Դասական գրաբարում քեւ քիչ, քայց հանդիպում է մակ հրամայական մախադասության մի այնպիսի տարատեսակ, որում տրամաբանորեն ուժգին ընդգծվելու նպատակով սկզբնային դիրքում է հայտնվել ոչ թե ստորոգյալն ամբողջությամբ, այլ միայն *մի՜* արգելականը, ինչպես օրինակ՝ *Մի՛ կարի զանձն քո աշխատ առնեիր այդչափ /Բուգ., 124/։ Որ դա իրոք այդպես է, կասկածի տեղիք չի տալիս, մասնավոր, երբ արգելական մասնիկը կրկնվում է միջնամասում, ինչպես, օրինակ՝ Մի՛ դու, արքա՛յ, և մի՛ զայդ այլ առ մեզ տեսիր /Եղ., 92/։ Հատկանշական է, որ այսպիսի դեպքերում ստորոգյալի տրամաբանորեն աննշանակ բայական մասը հեշտությամբ կարող է զբաղեցնել մույմիսկ մախադասության ամենաթույլ արտասանվող հատվածը՝ վերջը, որ, անշուշտ, հրամայական բային ոչ բնորոշ դիրք է։ Ամենայն հավանականությամբ մակ տա է պատճառը, որ մանաւանդ հրամայական կառույցները սովորաբար ոչ թե հրաման, պահանջ կամ կոչ են արտահայտում, այլ հորդոր, խնդրանք, հանդիմանություն, այսինքն՝ աչքի են ընկնում իրենց համեմատաբար մեղմ տոնայնությամբ։*

Խ. Բաղիկյանը գրում է, թե «կոչականի տեղը մախադասության մեջ մեծ չափով ազդում է մրա կշռի և էմոցիոնալ մերգործության վրա»։⁶ Մա պիտի հասկանալ այնպես, թե հրամայական մախադասություններում կոչականի դիրքն ու հնչերանգը իրար փոխապայմանավորող իրողություններ են։ Որ կոչականի տրամաբանորեն առավելագույնս ընդգծված լինելը մախադասության կազմում մրա ունեցած սկզբնային դիրքի շնորհիվ է, իրոք, կասկածի տեղիք չի տալիս (*Կի՛ն, դու հատաա՛ ինձ /Յոն., Դ, 21/ և այլն*)։ Եվ ընդհանրապես, այն շարադասական մասնակադասաբաններում, որոնցում հրամայական կառույցի կոչականը տեղափոխված է մախադասության վերջ, այդպիսի կոչականը համեմատաբար քիչ նկատելի է և թույլ ընդգծված, որովհետև այդպիսին է սովորաբար մախադասության վերջը։ Եվ, իրոք, անտարկելի է, որ հրամայական մախադասությունը եզրափակող դիրքում կոչականը զգալի չափով կորցնում է իր ընդգծվածությունը, արտաբերվում է թույլ հնչերանգով՝ վերածվելով մի տեսակ թարմատարի։ Այսպիսի մախադասությունները, որոնցում ենթակաները մեծամասամբ զեղված են լինում, դասական գրաբարում ունեն հիմնականում $\{ (S) \rightarrow P \rightarrow O \text{ կամ } A \rightarrow \text{«Կոչ.»} \}$ շարադասական մասնակադասաբար և սովորաբար ոչ թե կոշտ հրաման, այլ մախադաների մնան՝ պատվիրան, խնդրանք, զգուշացում, հրավեր կամ հորդոր են արտահայտում, ինչպես օրինակ՝ *Փրկեա՛ զիս ի թշնամեաց իմոց, Աստուած՝ /Մատթ., ԾԸ, 1/ կամ Նայեա՛ց ի սրբութիւն քո, Տէր /Յաղթ., Զ, 15 /։*

Ի դեպ, սովածն ավելի ցայտում է դիտվում այն դեպքերում, երբ տրամաբանական շեշտը իր վրա կրող ստորոգյալից առաջ՝ մախադասության սկզբում է դրված ստորոգյալի միջուկի բաղադրիչը՝ ընդգծման նպատակով։ Այսպիսի կառույցներին, որոնք ունեն $\{ O \text{ կամ } A \rightarrow P \rightarrow (S) \rightarrow \text{«Կոչ.»} \}$ շարադասական մասնակադասաբար, բնորոշ է ձևական ենթականի համեմատաբար առատ զործածությունը։ Օրինակ՝ *Աղո՛ զմի՛ քան զմեր վաղկադակի կատարեա՛ դու, արքա՛յ /Եղ., 18/։* Ավելացնեք մակ, որ գրաբարում բավականին նկատելի է ենթականի քաջակալության դեպքում վերջադաս թույլ կոչականի վրա երկրորդ դեմքի դիմորշ հողի սովորականությունը, ինչպես՝ *Ե՛լ ի վերայ լեռինդ քարձու, ստեղծարանիդ Մի՛նի, քարձրացո՛ զրաբբառ քո, ստեղծարանիդ Երուսաղեմի /Ազաթ., 427/։ Գիտեա՛, ասե՛, ո՛վ մեծդ ղեցազանց /ՄՆՊՀ, 1, ԺԱ/։*

⁶ Խ. Բ ա ղ ի կ յ ա ն, Ժամանակակից հայերենի պարզ մախադասության շարադասությունը, Եր., 1976, էջ 179։

Շատ հաճախ վերջադաս թույլ ընդգծված կոչականը գրաբարում քազմանդամ է: Ընդ որում, ինչքան ծավալուն է կոչականը մախադասութեան վերջում, այնքան նրա արարաբերումն ավելի թույլ է:

Օրինակներ՝ *Հայեա՜ց յօգնել իմձ, Տէ՛ր փրկութեան իմոյ /Սաղմ., ԼԵ, 23/:* *Ունկնդիր լերութ՛ք, ամեններեան ... ծնունդդ երկրի և որդիք մարդկան, ի միասին մեծամեծք և տնանկը /Ագաթ., 688/:* *Օրհնեցէ՛ք զմա երկինք և երկիր և հրեշտակք և զօրութիւնք և հուր և հողմք և մրրիկք /Եզն., 158/:* *Երթա՛յք յիմէն, անիծեսայր ի հուրն յախտեմական /Մատթ., ԻԵ, 41/:*

Ալկնհայտոբեն թույլանում է մակ միջադաս կոչականի հնչյւնգային ծանրաբեռնվածությունը, եթե առաջադաս ստորոգյալից ընդմիջված է նրա լրացումով, ինչպես՝ *Տու՛ր իմձ, Տէ՛ր, շնորհս համբերութեան դառն տանջանացս /Բուզ., 56/:* *Օրէնագէ՛տ աքա զիս, Տէ՛ր, ի մանասարքս իբրաւանց /Սաղմ., ՀԵ, 33/:*

Այնուամենայնիվ, ինչպես ասվեց վերևում, դասական գրաբարում կոչականով հրամայական մախադասութիւնների գերակշիռ մասը ենթակայագութի է՝ արտահայտված կոչականով և ստորոգյալի միջուկով, որի մեջ սովորաբար ստորոգյալի հետ հանդես է գալիս մակ որևէ խնդիր կամ պարագա տեսակի լրացում կամ երկուսը միաժամանակ: Այսպիսի հրամայական մախադասութիւնները ունեն ճշված շարադասական բաղադրիչների փոխդասավորութեան մի քանի կադապարային տարրերակներ, որոնց մեջ մեր հաշվումներով և՛ թարգմանական, և՛ ինքնուրույն գործերում ամենատարակալն ու գործածակալնը { «Կոչ.» → P → O կամ A } մասնակադապարն է:

Օրինակներ՝ *Որդի՛ մարդոյ, դարձո՛ գերեսս քո ի վերայ լերինդ Մէրայ /Եզն., ԼԵ, 1/:* *Այլ, Տէ՛ր, տու՛ր իմձ զօրութիւն համբերութեան ներութեան ցառոց փռանգիս իմոյ /Ագաթ., 86/:* *Արքա՛յ քաջ, ունկն դիր սակաւ բանից մերոց /Եզ., 90/:* *Եկեղեցո՛յ սիրիչք, առաքելոց որդիք, Հրիստոսի արեան գինք, մի՛ ծառայեցուցանէք հոգիս ձեր երկիւղի մարդկան /ԲՓՊՀ, 180 /:*

Այս շարադասական մասնակադապարով դրսևորվող հրամայական մախադասութիւններն ունեն իրենց սկզբնային մասի ոչ միայն խիստ քաղճք, այլև տեսական հնչյւնգ, որովհետև տրամաբանական գորել շեշտ են կրում և՛ մախադաս կոչականը, և՛ նրան անմիջապէս հաջորդող հրամայական բայը:

Օրինակներ՝ *Կեղծաւոր՛, հա՛ն մախ զգերանդ յականէ քումմէ /Մատթ., Ե, 5/:* *Հա՛յր, ապրեցո՛ զիս ի ժամէ ատոի յայտմանէ /Յոն., ԺԲ, 27/:* *Դստե՛րք Երուսաղեմի, մի՛ լայք ի վերայ իմ /Բուլ., ԻԳ, 28/ և այլն:*

Գործածութեան հաճախականութեամբ այս մասնակադապարային տարրերակին շատ քիչ է զիջում շարադասական բաղադրիչների { P → «կոչ.» → O կամ A } հաջորդականութիւնն ունեցող տարրերակը, որում մախադրի մման՝ կրկին տրամաբանորեն ընդգծում է մախադասութեան սկիզբը, ինչպես՝ *Արդ մայեա՛ց, Տէ՛ր, յերկնից ի սրբութենէ քումմէ /Ագաթ., 148/:* *Լուարութ՛, մանկու նք, զխրատ հօր /Մտակք, Դ, 1/:* *Օրհնեա՛, տէ՛ր եպիսկոպոս, զմեզ և զայգիս /Բուզ., 16/:* *Լո՛յս տուր, Տէ՛ր, աչաց իմոց /Սաղմ., ԺԲ, 5/:*

Ի տարրերութիւն վերոհիշյալ տարրերակների, մույն շարադասական մասնակադապարի { «Կոչ.» → O կամ A → P → (O A) } տարրերակում հրամայական բայով ստորոգյալը համեմատաբար թույլ շեշտվածութիւն ունի, եթե սկզբնային կոչականից ընդմիջված է իր որևէ լրացումով, որն այդ դիրքում է հայտնվել ընդգծման նպատակով, ինչպես՝ *Որդեա՛յ, իմոյ բանից մատո՛ գունկն քո /Մտակք, Ե, 1/:* Այն դեպքում, երբ չկան այլ բայական լրացումներ (վերջադաս), և կառույցի շարադասական մասնակադապարը ունի բաղադրիչների { «Կոչ.» → O կամ A → P } հաջորդականությունը, հրամայական մախադասութիւնը եզրափակող ստորոգյալը, անշուշտ, տրամաբանորեն էլ ավելի թույլ է շեշտված, ինչպես՝ *Արդ, թագաւորք, զայս ի միտ առէք /Սաղմ., Բ, 10/:* Այդպես է մակ, { O կամ A → «Կոչ.» → P } մասնակադապարով արտահայտված հրամայական մախադասութիւններում, որտեղ կոչականը ընկած է ստորոգյալի միջուկի բաղադրիչների արանքում՝ տրոհելով այն թույլ ընդգծվող երկու մասերի: Այս է պատճառը, որ մման մախադասութիւնները սովորաբար ոչ թե կարգադրութիւն կամ կոչ են արտահայտում, այլ աղերսանք, խնդրանք կամ հորդոր, ինչպես՝ *Չմանասարքս քո, Տէ՛ր, ցոյց իմձ /ն.ա., ԻԴ, 4/:*

Այժմ քննության առնենք այն հրամայական մախադասությունները, որոնք իրենց մեջ կոչական չունեն։ Վերևում նշեցինք, որ կոչականի առկայությունը սրանցում մայաստավոր հանգամանք է առանց այն էլ քիչ գործածական ենթակայի էլ ավելի պատիվ դրսևորման տեսակետից։ Մոտավոր հաշվումներով քսանից մեկ դեպքում է որ հրամայական մախադասության մեջ միաժամանակ առկա են և՛ կոչականը, և՛ ենթական։ Այն, որ կոչականի առկայությամբ ենթակայի անհրաժեշտությունը լիովին ավելորդ է դառնում, փաստվում է մասնաճյուղով, որ կոչականի բացակայության դեպքում ենթական հրամայական մախադասություններում համեմատաբար հաճախագիտ է հանդես գալիս՝ դրսևորվելով միջին հաշվով մի դեպքերից մեկում։

Այն հրամայական մախադասությունները, որոնցում կան կոչական ձայնարկություններ, դասական գրաբարում հանդես են գալիս մի քանի շարադասական կաղապարներով։ Դրանք բոլորն էլ պարտադրաբար սկսվում են կոչական ձայնարկությամբ։ Մովսեսացի վերջինիս հաջորդում է ենթական (եթե կա), ապա՝ ստորոգյալն իր լրացումներով (եթե դրանցից առկա են)։ Ենթակա ունեցող կառույցներում շարադասական բաղադրիչները գերազանցապես դասավորված են հետևյալ հաջորդականությամբ. ամենաշատ հանդիպողը { «Չայնարկ. → S → P → OկամA » } մասնակաղապարն է՝ *Աղէ՛, դու ասա՛ ինձ զայս ամենայն մեղմով* /Ագաթ., 62 /: Համեմատաբար ավելի սակավադիպ է { «Չայնարկ. » → S → OկամA → P } և { «Չայնարկ. » → S → OկամA → P → OկամA } կաղապարներով արտահայտվող հրամայական մախադասությունները, օրինակ՝ *Աղէ՛, դու հրովարտակ ի դուռն տուր փսն այրուձիդ* /Եղ., 120 /:

Կոչական ձայնարկությամբ հրամայական մախադասությունների մեծ մասում, ինչպես ասվեց, ենթակաները չկան։ Այս պարագայում վերոնշյալ կառույցները դրսևորվում են սովորաբար { «Չայնարկ. » → P → OկամA } և սրանից ավելի ծավալուն { «Չայնարկ. » → OկամA → P → OկամA } կամ, ընդհակառակը, միայն ձայնարկությամբ և ստորոգյալով արտահայտված { «Չայնարկ. → P } շարադասական կաղապարներով, ինչպես օրինակ՝ *Աղէ՛, լուր մեծի մարգարէին՝ խաղաղութեաց կարապետին Յովհաննու* /Ագաթ., 338 /: *Աղէ՛ տուր ինձ գիտել ...* /Բուգ., 141/: *Տի՛ օն անդր թողէ՛ք գլխմարտեան գրաբարցումնդ* /Եղ., 66/: *Հասրա՛, ժի՛ր լերուք* /Ա.Մակ., Ե, 32/: *Օ՛ն, եկա՛յք* /Եռն., ԺԱ, 16 / և այլն։

Հարկ է նշել, որ ձայնարկությունների շնորհիվ զգալի չափով մեղմանում է մախադասությունների հրամայական հնչեղանքը՝ ձեռք բերելով ավելի շատ աղայական, խրախուսական կամ խնդրական երանգներ։

Հրամայական մախադասությունների մի տարատեսակ են այն կառույցները, որոնց մեջ հրամայական բայ-ստորոգյալին հաղադրվում է նույնպիսի քերականական ձևավորում ունեցող մեկ այլ բայ, որը, տակալն, հանդես է գալիս ոչ իր բայական իմաստով, այլ ձայնարկության կամ վերաբերականի մշանակությամբ։ Այսպես, եթե *Թո՛ղ մեզ զամենայն խնցումն չարեացն* /Ագաթ., 225/ կամ *Թո՛ղ զպատարագն քո առաջի սեղանդ* /Մատթ., Ե, 24/ կառույցներում գործ ունենք ստորոգյալի դերով հանդես եկող թողուլ բայի եզակի հրամայականի ձևերի հետ, ապա *Թող եկեսցէ դմա ուրախութիւն* /Ագաթ., 48/ մախադասության մեջ այդ բայի հրամայականը աղև ստորոգյալ չէ, այլ վերաբերական բառի իմաստ ունի, որ նկատելիորեն մեղմում է հրամայական հնչեղանգը։ Այսպես են ընկալվում մասն. հրամայականի *արի՛, ե՛ն, ահ՛ն* և այլ ձևերը հետևյալ բնագրային օրինակներում՝ *Եկ հալանեսց՛ք բանից աչագեղոյ զստեքս Ալանաց՛ տալ զպատանիդ* /ՄԻՊՀ, 2, Ծ/։ *Արի՛ ա՛նց ի տեղին, ի Բեթել* /Ծննդ., ԼԵ, 1/։ *Խաղա՛ գնա՛ դու յերկիրն Զուշանաց* /Եղ., 18/։ *Արի՛ ա՛ն զմանուկդ և զմայր իւր* /Մատթ., Բ, 13/։ *Աղդ տես խնդրեա՛լ այր մի իմաստուն* /Ծննդ., ԽԱ, 33/ և այլն։ Նմանատիպ հրամայական մախադասությունները, գրեթե առանց բացառության, արտահայտվում են { «Վերաբ.» → P → OկամA } շարադասական մասնակաղապարով։ Եթե կառույցն իր մեջ ունի մասն. կոչական կամ ենթական, ապա առաջինը գերազանցապես զբաղվում է մախադասության սկիզբը (*Այծի՛ց Հայոց արքայ, ե՛ն մի՛տ ի խրճան խառոյ ի վերայ* /Բուգ., 4, ԺԶ/), իսկ երկրորդը՝ ստորոգյալին անմիջապես հաջորդող դերը (*Արի՛ և գնա՛ դու ի կողմն հարստոյ* /Գործք, Բ, 26/):

Վերևում ասվեց, թե կոչականի բացակայությամբ հրամայական մախադասություններում զգալիորեն մեծացնում է ենթակայի գործածության հաճախականությունը։

Այդ է վկայում մահ բնագրային հարուստ նյութի վիճակագրական հանգամանալի բնությանը: Դասական գրաբարում ենթակա ունի այսպիսի մախադասությունների գրեթե 12 %-ը: Ընդ որում, ամենագործածականը սրանցում քաղադրիչների { $P \rightarrow S \rightarrow O$ կամ A } հաջորդականությունն ունեցող շարադասական մասնակադասարն է: Այն գրեթե հավասարաչափ դրսևորում ունի և՛ թարգմանական, և՛ ինքնուրույն գործերի լեզվում, և կարելի է համարել ամենատարածված շարադասական վիճակը մահ մախադասությունների համար՝ հրամայական ուժգին շեշտով սկզբնային տոբոգյալ, վերջինիս հաջորդող քացարձակապես աննշանակ ենթակա և մախադասությունը եզրափակող բայական անդամի լրացում կամ լրացումներ:

Օրինակներ՝ *Սրբեա՛ դու ինձ զամենայն անդրանիկ մախծին* /Եղից., ԺԳ, 2/: *Պատարաստեա՛ դու ինձ աստ եօթն զուարակ և եօթն խոյ* /Եղից., ԺԳ, 1/: *Ապաշտեա՛ դու ի չարեացդ քոց յաղցանե* /Գործք., Ը, 22/: *Խաղա գնա՛ դու յերկիրն Քուշանաց* /Եղ., 18/:

Եզակի դեպքերում է, որ շեշտակի տոբոգյալին անմիջապես հետագայս դիրքում ձևական ենթական տրամաբանորեն չեզոք չէ: Դա աղվում է ենթակային և, մահ շաղկապների կամ այլ քառային միջոցների հարադրմամբ, որոնք ի գոթու են նկատելիորեն ընդգծել ենթական, ինչպես՝ *Երթա՛յր և դուք յաղի իմ* /Մատթ., Ի, 4/:

Առավել սակավադեպ են { $P \rightarrow O$ կամ $A \rightarrow S$ } շարադասական կադասար ունեցող հրամայական մախադասությունները: Սրանցում, ի տարբերություն մախադրի, տոբոգյալի միջուկն ամբողջական է ենթակայի՝ վերջնային դիրքում հայտնվելու շնորհիվ, ինչը տեղի է ունենում հիմնականում ենթակայի ծավալումությամբ, երբեմն մահ՝ այդ դիրքում նրա ընդգծվելու սրտոնառնելով, թեև մախադասության վերջն այս առումով սովորաբար հաճախ դիրք չէ ենթակայի համար: Համեմայն դեպս նշենք, որ այս մասնակադասարը բնագրերում գերազանցապես վկայված է քաղմանդամ ենթակայի առիթով, ինչպես՝ *Ե՛լ առ Տերն դու և Սհարոն և Նադար և Աբիուդ և եօթանասուն այր ի ծերոցն Իսրայիլի* /Եղից., ԻԴ, 1/:

Ենթական, տոբոգյալը և վերջինիս լրացումները կարող են հանդես գալ ևս մի քանի շարադասական մասնակադասարներով: Դրանցից մեկը { $S \rightarrow (O$ կամ $A) \rightarrow P \rightarrow (O$ կամ $A)$ } մասնակադասարով հրամայական կառույցն է, որում եթե ձևական ենթական մույնիսկ իր առաջադասությամբ չի կարող նկատելի դառնալ, ապա դրան հակառակ՝ տոբոգյալին մախադրող դիրքում քայական լրացումն անշուշտ տրամաբանորեն ընդգծված է, ինչպես՝ *Դուք վաղվադակի այրուծի զամարեցէ՛ք ստաջոյ քան զիս* /Եղ., 20/ կամ *Եր դու անգէն արա՛ քեզ բնակութիւն* /Նա., 18/: Հավանաբար դա է պատճառը, որ այսպիսի մախադասություններում շատ հաճախ առաջադաս քայական լրացումը գեղյված է լինում՝ տոբոգյալի հրամայական հնչեղանգը չթուլացնելու նպատակով ({ $S \rightarrow P \rightarrow O$ կամ A } շարադասական մասնակադասար): Այդպես է, օրինակ՝ *Եր դուք մի՛ խնդրէք զինչ ուտիցէք* /Դուկ., ԺԲ, 29/: *Դու տեն զճշմարիտ կերպարանս քերել ի սուրբ կուսէն* /Ագաթ., 402/ և այլ մախադասություններում: Մինչդեռ մույնը չի կարելի ասել տոբոգյալին հետագայս քայական լրացման մասին, որի գեղյման դեպքում հրամայական բայը հայտնվում է իր համար անսովոր թույլ դիրքում ({ $S \rightarrow O$ կամ $A \rightarrow P$ } շարադասական մասնակադասար): Այս դեպքում մախադասությամբ արտահայտվածը իրականում ավելի շատ հորդոր կամ խնդրանք է, քան հրաման, ինչպես, օրինակ՝ *Այլ դու յետ ամենայնի այլ զմեզ մի՛ հարցաներ* /Եղ., 82/:

Սեզ մնում է դիտարկել մահ գեղյված ենթակայով այն հրամայական կառույցները, որոնցում միայն տոբոգյալն է՝ իր լրացումների հետ: Սրանք ոչ միայն մեծաքանակ են դասական գրաբարում, այլև կազմում են ընդհանուր առմամբ բոլոր հրամայական մախադասությունների գերակշիռ մասը (ավելի քան 70 %-ը): Իսկ սրանց մեջ համոզված կարելի է ասել՝ քացարձակ գերակշռություն ունեն { $P \rightarrow O$ կամ A } շարադասական կադասարով արտահայտվող մախադասությունները, որոնցում հրամայական քային հաջորդում են նրա մեկ կամ ավելի լրացումներ:

Օրինակներ՝ *Զգո՛յշ յերուք յողորմութեան ձերում* /Մատթ., 2, 1/: *Մի՛տ դիր ընթերցուածոց մխիթարութեան վարդապետութեան* /Լուր., 124/: *Բա՛րձ և փարատեա՛ զմեզ չարութեան կռապաշտութեան հեթանոսութեան քաղցրութեամբ սիրով քով առ արարածս* /Ագաթ., 94/: *Պատմեցէ՛ք ի հեթանոսս զգործս նորա* /Մատթ., ԸԴ, 1/: *Հնի գրարկութիւն քո ի վերայ հեթանոսաց* /Երեմ., Ժ, 25/:

Ի դեպ, հատկապես այս շարադասական մասնակադասարմ ունեցող հրամայական մախադասությունների ամիթով մշնք, որ գրաբար բնագրերում նկատելի է մի հետաքրքիր ոճական հնարքի օգտագործում, որը քալականին ցայտուն դիտվում է մասնավորապես գեղարվեստական գունավորում ունեցող կտորներում, հատկապես «Աստվածաշնչում»: Խոսքը վերաբերում է այն իրողությանը, երբ քարդ համադասական մախադասության կազմիչ պարզ մախադասություններից առաջինում առկա է շարադասական քաղադրիչների { $P \rightarrow O$ կամA } դասավորության կարգը, որը երկրորդում ուղղակի շրջվում է՝ { O կամA $\rightarrow P$ } : Ոճաարտահայտչական այս միջոցի (շրջույթ) դերն այն է, որ շեշտված ստորոգյալների միանգամայն հակադիր դասավորության շնորհիվ մի տեսակ հավասարակշռում է արտասանական հնչեքանգը քարդ կառույցի երկու եզրերի վրա՝ ձեքբազատելով խոսքը միակեքությունից, շարադասական կադասարի կրկնությունից, շարադանքի միատարադ ոճից:

Օրինակներ՝ *Տոյն նոցա ըստ գործոց նոցա, ըստ անօրէնութեան գնացից նոցա հատո՛ւ նոցա /Մաղմ., ԻԷ, 4/։ Մե՛կք ի պտղոյ երկրիս յամանս ձեր ... եւ արծաթ կրկին առէ՛ք ի ձեռս ձեր /Ծննդ., ԽԳ, 12/։ Նահանջեա՛ւ՝ գարտնօղ քարտ չորակեքութեամբ և զխտութիւն սրտեղ կաղեհա՛ւ տրնութեամբ /Եզն., 252/։ Մի՛ փոխեր զսահմանս յախտեմանականս և ի ստացուածս որքոց մի՛ մտանիցես /ն.տ., 10/։*

Հակառակ իրողությունը, երբ համադաս եզրերից առաջինում { O կամA $\rightarrow P$ }, իսկ երկրորդում { $P \rightarrow O$ կամA } հաջորդականությունն է, համեմատաբար սակավ դրսևորում ունի, ինչպես՝ *Ձգչմարտութիւն ստացի՛ր, և մի՛ քողուր զմաստութիւն և զխրատս /Առակք., ԻԳ, 23/։ Ձամենայն ազգս հաւարեա՛ւ և անցո՛ ըստ Պահ դռնո ի մերքս /Եղ., 18/։ Ի գինեքրոս գինոյ մի՛ յանդիմաներ զմերձատրն և մի՛ անգոսներ զնա յուրախութեան նորա /Միր., ԼԵ, 41/։*

Թեև գեղյված ենթակայով հրամայական մախադասությունների մեծ մասը, ինչպես ասվեց, ունեն { $P \rightarrow O$ կամA } դասավորության կարգը, այնուամենայնիվ երբեմն այդ կարգը շրջվում է, ինչի պատճառով ստորոգյալը կարող է հայտնվել ինչպես միջակա, այնպես էլ մախադասությունը եզրափակող դիրքերում։ Ընդամեն, երկու դեպքում էլ ստորոգյալին անմիջապես մախադարող խնդիրը կամ պարագան զգալի տրամաբանական ընդգծվածություն են ստանում։

Օրինակներ՝ *Յամենայն սրտէ քումմէ փառալորեա՛ւ զհայր քո /Միր., Է, 28/։ Ձշաւիդս քո ուսա՛ ինձ /Մաղմ., ԻԴ, 5/։ Ի ձեզէն հանէ՛ք ի խաչ /Յոհ., ԹԺ, 6/։ Միայն յօժարութիւն կամաց սրտին՝ սիրով մատուցանել զսեղիս /Ազար., 11/։ Բայց զայս քան կատարեցէ՛ք վաղվադակի /Եղ., 18/։*

Ի դեպ, նկատելի է, որ հրամայական քայով ստորոգյալի միջակա դիրքը բնորոշ է հատկապես մեծածավալ կամ քազմարառ մախադասություններին։ Ամենայն հավանականությամբ այդպիսի դիրքում ստորոգյալն ունի նաև ծավալուն կառույցի երկու խաշոր հատվածների արտասանական հնչեքանգը հավասարակշռող միջոցի դեր, ինչպես՝ *Եւ զմեզ, հեռի մարմնով, մերձ համարեալ հոգւով՝ յիշեցէ՛ք ի ձեր ի նորաքեւր յադօթալ, ի ձերում պարզեհալ փրկութեանդ /Ազար., 825/։*

Սակավ քացատություններով՝ գեքազանցապես { $P \rightarrow O$ կամA } շարադասական մասնակադասարմ ունեն դիմավոր և անդեմ միակազմ հրամայական մախադասությունները։ Արգելական հրամայականով արտահայտված ստորոգյալը դիմավոր միակազմ կառույցներում համարյա միշտ սկզբում է և ունի քարձր հրամայական հնչեքանգ, ինչի շնորհիվ այսպիսի կառույցները արտահայտում են հատու հրաման, կարգադրություն, խրախույս կամ կոչ։

Օրինակներ՝ *Մի՛ տար զեկեղեցի քո յայլն կատականաց անօրէն իշխանիս այտրիկ /Եղ., 98/։ Մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո /Եղից., Ի, 18/։ Մի՛ խնայեր խրատել զտղայ /Առակք., ԻԳ, 13/։ Մի՛ խտտորի քարկութեամբ ի ծառայէ քումմէ /Մաղմ., ԻԶ, 9/։ Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն /ն.տ., 1/։*

Նույնպիսի ոճաարտահայտչական մշանակություն ունեն նաև { $P \rightarrow O$ կամA } շարադասությունն ունեցող անդեմ միակազմ հրամայական մախադասությունները, քեև քիչ գործածական են մախադրների համեմատությամբ։

Օրինակներ՝ *Շանաչի զինատուփին և զխրատ Բոր.*, 50/։ *Միրել զԱստուածութիւն յամենայնէ սրտէ և յամենայնէ անձնէ և զօրութեամբ ԼԱգաթ.*, 320/։ *Խնդալ ընդ խնդացոյս Լոռվմ.*, ԺԲ, 15/։

Երբեմն մի՝ արգելականին անմիջապես հաջորդում է որևէ բայական լրացում։ Ընդ որում, ինչքան խոնարհված բայը կամ անորոշ դերբայը հեռանում է արգելական մասնիկից դեպի մախադասութիւն վերջ, այնքան թուլանում է հրամանի ուժը, ինչպես՝ *Մի՛ չար փոխանակ չարի հատուցանել ԼԱ. Պետր.*, Գ, 9/։ *Մի՛ կարի զանձն քո աշխատ առներ աղչաւի Բուզ.*, 142/ և այլն։

Անդին և հասկապես դիմալոր միակազմ հրամայական մախադասութիւնների չնչին մասն է արտահայտւում {ՕկամA → P} շարադասական մասնակադասարարով կամ դրա՝ նաև հետադաս լրացում ունեցող ավելի ծավալուն տարբերակով որտեղ, անշուշտ, իր լրացյալին առաջադաս խնդիրը կամ պարագան որոշակի շեշտվածություն ունի, ինչպես՝ *Յակամնս անգզամի ամեննին մի՛ խօսիր Լուսիք.*, ԻԳ, 4/։ *Չհանդերձս ձեր մի՛ սրտատէք ԲԱռ.*, Ժ, 6/։ *Մարմնով հանդերձ, ասէ, կրել գրարիս և զչարիս և ոչ միայն հոգւով Եզն.*, 292/։ *Հասպա վաղվադակի զինի ... և զինչ պիտի յորախութեան հանդերձ՝ Հրէիցն մատուցանել զեօթն օր ԲԱ Մակ.*, Ի, 21/։

Համառոտագրություններ

Ագաթ. — Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914։

Բուզ. — Փաւստոսի Բիզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912։

Եզն. — Եզնկայ վարդապետի Կողբացւոյ «Եղծ աղանդոց», Թիֆլիս, 1914։

Եղ. — Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957։

Կոր. — Կորյուն, Վարդ Մաշտոցի, Երևան, 1941։

ՂՓՊՀ — Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, Տիֆլիս, 1904։

ՄԽՊՀ — Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1913։

Մ. Գրքի (Աստուածաշունչ մոտեման հնաց և նորոց Կոտակարանաց, Կ. Պոլիս, 1895) համատեաագրութիւններից՝ Առակք. — Առակք Սողոմոնի, Բ. Տիմօր. — Թոսթ երանելոյն Պողոսի առաքելոյ առ Տիմօրեան Երկրորդ, Գ. Մակ. — Գիրք Երրորդ Մակարայեցւոց, Գործք — Գործք Առաքելոց, Եզնիկ. — Մարգարեութիւն Եզնիկի, Ելից — Գիրք Ելից, Երգ — Երգ Երգաց, Թիւր — Գիրք Թուրաց, Հոռվմ. — Թուրք երանելոյն Պողոսի առաքելոյ առ Հռովմայեցիսն Առաքնեցորդ, Ղևոն. — Գիրք Ղևոնականք, Ղուկ. — Սրբոյ Անտարանիս Յիսուսի Բրիստոսի ըստ Ղուկասու, Մաթթ. — Սրբոյ Անտարանիս Յիսուսի Բրիստոսի ըստ Մատթեոսի, Յովնիք — Գիրք Յովնիքայ և այլն։

СЛОВОПОРЯДКОВЫЕ МОДЕЛИ ПРЕДЛОЖЕНИЙ С ОСОБОЙ ИНТОНАЦИЕЙ В КЛАССИЧЕСКОМ ГРАБАРЕ

Резюме

С. Айрапетян

Исследуются осовенности порядка слов в повелительных предложениях классического старовармянского языка (грабар), рассматриваются все словопорядковые модели и свойственные им стилистикоэкспрессивные значения как в оригинальных, так и переводных источниках того языкового периода.

Особое внимание уделяется вопросам взаимосвязи и взаимообусловленности повелительной интонации, структуры предложения и словопорядковой организации в этих моделях.